

Կոտորակների բաժանումը/մաս 3

Համարիչ

Հայտարար

Կոտորակը մեկ ուրիշ կոտորակի բաժանելիս ստացվում է մի կոտորակ, որի համարիչը հավասար է բաժանելիի համարիչի և բաժանարարի հայտարարի արտադրյալին, իսկ հայտարարը՝ բաժանելիի հայտարարի և բաժանարարի համարիչի արտադրյալին:

Օրինակ՝ $\frac{6}{5} : \frac{7}{3} = \frac{6}{5} \cdot \frac{3}{7} = \frac{6 \cdot 3}{5 \cdot 7} = \frac{18}{35}$

Առաջադրանքներ

- Կատարեք կոտորակների բաժանում:

$$\frac{6}{14} : \frac{5}{28}$$

$$\frac{12}{5} : \frac{11}{10}$$

$$\frac{50}{9} : \frac{6}{27}$$

$$\frac{4}{35} : \frac{16}{25}$$

$$\frac{15}{16} : \frac{20}{28}$$

$$\frac{30}{18} : \frac{10}{36}$$

- Կատարեք բաժանում:

Օրինակ՝

$$3 : \frac{4}{3} = 3 \cdot \frac{3}{4} = \frac{3 \cdot 3}{4} = \frac{9}{4}$$

$$50: \frac{100}{17}$$

$$16: \frac{4}{45}$$

$$18: \frac{18}{12}$$

$$6: \frac{36}{25}$$

- Կատարեք բաժանում
Օրինակ՝

$$\frac{4}{9}: 3 = \frac{4}{9}: \frac{3}{1} = \frac{4}{9} \cdot \frac{1}{3} = \frac{4 \cdot 1}{9 \cdot 3} = \frac{4}{27}$$

$$\frac{18}{115}: 18$$

$$\frac{4}{18}: 6$$

$$\frac{3}{8}: 10$$

$$\frac{3}{25}: 18$$

- Աստղանիշի փոխարեն ինչ թիվ գրելու դեպքում կատացվի
հավասարություն:

- Օրինակ՝

$$\frac{3}{5} \cdot * = \frac{15}{16}$$

$$\frac{15}{16}: \frac{3}{5} = \frac{15}{16} \cdot \frac{5}{3} = \frac{75}{48} = \frac{25}{16}$$

$$\frac{10}{14} \cdot * = \frac{30}{42}$$

$$\frac{24}{11} \cdot * = \frac{48}{22}$$

- Գտեք այն թիվը, որի`

Օրինակ`

- $\frac{1}{4}$ -րդ մասը հավասար է $\frac{3}{4}$

$$\frac{3}{4} : \frac{1}{4} = \frac{3}{4} \cdot 4 = \frac{12}{4} = 3:$$

- $\frac{6}{5}$ -րդ մասը հավասար է $\frac{3}{8}$
- $\frac{4}{5}$ -րդ մասը հավասար է $\frac{8}{7}$: